ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արենիի համայնքապետարանը հրավիրում է մրցույթի, որը տեղի կունենա 2022թ. մայիսի 31 -ին, ժամը՝ 11^{00}-ին: Հասցեն՝ Վայոց ձորի մարզ, Արենի համայնք, Արենի բնակավայր, 15 փողոց, շենք 3:

Մրցույթ-վարձակալություն

Հողամաս 1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 74 հա (ծածկագիրը՝ 10-036-0102-0070, գործառնական նշանակությունը՝ արոտավայր) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 10 տարի ժամկետով, հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս 200 000 ՀՀ դրամ:
Հողամաս 2. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 1.55797 հա (ծածկագիրը՝ 10-006-0300-0387, գործառնական նշանակությունը՝ 5-րդ կարգի ջրովի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով, հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս 20 000 ՀՀ դրամ:
Հողամաս 3. Արենի համայնքի Արենի բնակավայրի մշակույթի տան նկուղային հարկից առանձնացված 53.5 ք/մ մակերեսով տարածքը, մրցույթով, 5 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ: Տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 50 000 ՀՀ դրամ:
Հողամաս 1-ում նշված հողամասը վարձակալությամբ հատկացվում է Արենի համայնքում վայրի բնության, կենդանական աշխարհի և բուսականության պահպանման ծրագրեր իրականացնելու նպատակով: Նշված հողատարածքների մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձը կամ կազմակերպությունը իրավունք չունի խոչընդոտելու համայնքի բնակիչների մուտքը արոտավայրեր՝ անասունների արածեցման, խոտհնձի, օրենքով չարգելված կենդանիների և թռչունների որսի և խոտաբույսերի հավաքման նպատակով:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է մրցույթի նախորդող երրորդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 11^{00}-ն: Հայտ կարող են ներկայացնել ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրենց հետ կունենան անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները և լիազորությունները հաստատող փաստաթղթերը: Հայտի ներկայացման համար անհրաժեշտ է վճարել 5000 ՀՀ դրամ տեղական վճար: Մրցույթի օրը բոլոր մասնակիցները վճարում են նախավճար՝ տարեկան վարձավճարի 50%-ի չափով: Վճարում կարող եք կատարել ինչպես կանխիկ՝ Արենիի համայնքապետարանի հաշվապահություն, այնպես էլ անկանխիկ հետևյալ հաշվեհամարին՝

- տեղական վճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355105082 Կենտրոնական գանձապետարան
- նախավճարի վճարման հաշվեհամարն է՝ 900355105058 Կենտրոնական գանձապետարան:
  մրցույթում չհաղթած մասնակցին մուծված նախավճարի չափը վերադարձվում է տեղում՝ գրավոր դիմելուց հետո:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներին՝ 028160001, 093752480 Գևորգ Սիմոնյանին: